ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«29» օգոստոսի 2017 թվականի № 106-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով «ԱՐԹՎԱՆ» ՍՊ ընկերության 2017թ հունիսի 16-ի թիվ 04 դիմումը, հանքավայրի շահագործման նախագծի 2017թ օգոստոսի 16-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ԲՓ-73, ինչպես նաև 2017թ հունիսի 29-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1501 փորձաքննությունների դրական եզրակացությունները և ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՐԹՎԱՆ» ՍՊ ընկերությանը 4 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/564 թույլտվությունը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի 1.X=4471079 Y=8393470, 2.X=4471140 Y=8393545 3.X=4471226 Y=8393628 4.X=4471241 Y=8393616, 5.X=4471226 Y=8393587 6.X=4471213 Y=8393572 7.X=4471158 Y=8393546 8.X=4471133 Y=8393511 9.X=4471116 Y=8393473 ինչպես նաև 10.X=4471215 Y=8393405 11. X=4471209 Y=8393436 12.X=4471215 Y=8393463 13.X=4471253 Y=8393516 14.X=4471284 Y= 8393557 15.X=4471281 Y=8393583 16.X=4471327 Y=8393554 17.X=4471257 Y=8393435 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) արդյունահանում կատարելու նպատակով, հատկացնելով՝ 105.7 հազ. տ. օբսիդիանի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-564 լեռնահատկացման ակտով տրված տարածքի՝ 1.X=4471073 Y=8393466 H=1408.0 (h=0), 2.X=4471098 Y=8393548 H=1417.5 (h=0), 3.X=4471271 Y=8393669 H=1407.0 (h=0), 4.X=4471286 Y=8393670 H=1412.5 (h=0), 5.X=4471286 Y=8393646 H=1412.5 (h=0) 6.X=4471330 Y=8393554 H= 1418.0 (h=0)7.X=4471260 Y=8393431 H=1427.5 (h=0) 8.X=4471221 Y=8393380 H=1410.0

(h=0) 9.X=4471136 Y=8393383 H=1389.0 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված 4.5 հա տարածքը:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 25532 տ. արդյունահանվող զանգված:

3. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 3-րդ տեղամասի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ